ՄԵՂՐԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Սույն ձեռնարկը ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակիցների աշխատանքի, ինչպես նաև նրանց «Էկոգլոբ» օրգանական սերտիֆիկացնող կազմակերպության հետ համագործակցության արդյունք է:

Սույն ձեռնարկի համար որպես աղբյուր է ծառայել «Էկոգլոբ» կազմակերպության մտավոր սեփականություն հանդիսացող «Գրին Կովկաս» օրգանական արտադրության ստանդարտը, ԵՄ օրենսդրությունը և համացանցը: Չնայած նշված աղբյուրները վստահելի են, սակայն ծառայությունը պատասխանատվություն չի կրում սույն ձեռնարկում նշված տեղեկատվության օգտագործման արդյունքում առաջացած որևէ հետևանքի համար:

Սույն ձեռնարկը հրատարակվել է ծառայության նախաձեռնությամբ՝ միտված հայկական արտադրության մեղրը արտասահմանյան շուկաներում հասանելի և մրցունակ դարձնելուն:

2

Ընդհանուր տեղեկություններ օրգանական արտադրության վերաբերյալ

- Օրգանական արտադրանքի նկատմամբ սահմանված պահանջները տարբերվում են այլ գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ սահմանված պահանջներից, այնքանով, որ օրգանական արտադրության դեպքում արտադրանքի իդենտիֆիկացումը և մակնշումը կազմում են գործընթացի բաղկացուցիչ մաս և կարևոր պահանջ:
- «Օրգանականը» մակնշման տերմին է, որը տարբերակում է այն արտադրանքը, որը ստեղծվել է՝ համաձայն օրգանական արտադրության ստանդարտների, և սերտիֆիկացվել է պատշաճ հիմնադրված սերտիֆիկացնող մարմնի/ների կողմից:
- Եթե մակնշման մեջ արտադրանքը կամ դրա բաղադրամասերը նկարագրվել են «օրգանական», «կենսադինամիկ», «կենսաբանական», «էկոլոգիական» կամ միևնույն իմաստը պարունակող այլ տերմիններով՝ ներառյալ նշվածների կրճատ ձևերը, սրանք գնորդին վկայում են այն մասին, որ արտադրանքը կամ դրա բաղադրամասերը արտադրվել են՝ համաձայն օրգանական արտադրության ընթացակարգերի:
- «Օրգանական արտադրությունը» տնտեսության կառավարման ամբողջական համակարգ է, որը միավորում է բնապահպանական լավագույն փորձը, կենսաբազմազանության պահպանման լավագույն մակարդակը, բնական ռեսուրսների պահպանումը, կենդանիների բարեկեցության ստանդարտների կիրառումը, ինչպես նաև այնպիսի արտադրական գործընթացներ, որոնք հիմնված են սպառողների՝ մթերքի արտադրության համար բնական նյութեր և գործընթացներ կիրառելու վերաբերյալ նախասիրությունների վրա:
- Օրգանական արտադրության ընթացակարգը, այսպիսով, ունի երկակի սոցիալական դեր. մի կողմից՝ այն ապահովում է որոշակի շուկա, որը համապատասխանում է օրգանական արտադրանք սպառողի պահանջներին, և մյուս կողմից՝ ապահովում է հասարակայնությանը այնպիսի արտադրանքներով, որոնք օժանդակում են շրջակա միջավայրի և կենդանիների բարեկեցության պահպանմանը, ինչպես նաև գյուղի զարգացմանը:



Ընդհանուր սկզբունքներ

- Մեղվապահությունը կարևոր գործունեություն է, որը նպաստում է շրջակա միջավայրի, գյուղատնտեսության և անտառային տնտեսության արտադրանքի բարելավմանը՝ մեղուների միջոցով փոշոտման իրականացմամբ:
- Օրգանական արտադրության ժամանակ փեթակների հետ վարվելը և կառավարումը պետք է համապատասխանեն օրգանական արտադրության սկզբունքներին:
- Հավաքի տարածքները պետք է բավականաչափ մեծ լինեն, որպեսզի ապահովեն համապատասխան և բավականաչափ կեր և ջուր:
- Բնական նեկտարի, մեղրացողի և ծաղկափոշու աղբյուրները պետք է հիմնականում ունենան օրգանական ծագում և/կամ լինեն վայրի բույսերից:
- Մեղուների առողջությունը պետք է հիմնված լինի պրոֆիլակտիկայի վրա, ինչպիսին է, օրինակ՝ ցեղերի ընտրությունը, բարենպաստ միջավայրի, հավասարակշռված կերի ապահովումը և համապատասխան բուծման կիրառումը:
- Փեթակները պետք է կազմված լինեն հիմնականում բնական նյութերից, որոնք շրջակա միջավայրի կամ մեղվաբուծական արտադրանքի աղտոտման ռիսկ չեն պարունակում:
- Երբ մեղուները տեղադրվում են վայրի տարածքներում, պետք է հաշվի առնել տեղի միջատների պոպուլյացիան:

Փեթակների տեղադրում

- Փեթակները պետք է տեղադրվեն այնպիսի վայրերում, որոնք երաշխավորում են նեկտարի և ծաղկափոշու այնպիսի աղբյուրներ, որ բաղկացած են օրգանական մեթոդով արտադրվող մշակաբույսերից կամ պատահական աճած և վայրաճ ոչ օրգանական անտառային կամ պատահական աճած մշակաբույսերից, որոնք մշակվում են միայն ցածր էկոլոգիական ազդեցություն ունեցող մեթոդներով:
- Փեթակները պետք է տեղադրվեն բավականաչափ հեռու այնպիսի աղբյուրներից, որոնցից կարող է տեղի ունենալ մեղվապահական արտադրանքի աղտոտում կամ կարող է վատթարանալ մեղուների առողջական վիճակը:
- Մեղվապահական փեթակները պետք է տեղադրված լինեն այն տարածքներում, որտեղ մշակվող և/կամ ինքնաբերաբար աճող բուսականությունը համապատասխանում է օրգանական արտադրության պահանջներով սահմանված կանոններին:
- Օրգանական արտադրության սերտիֆիկացնող մարմինը (այսուհետ՝ սերտիֆիկացնող մարմին) պետք է հաստատի այն տարածքները, որոնք ապահովում են մեղրացողի, նեկտարի և ծաղկափոշու համապատասխան աղբյուրներ՝ հիմք ընդունելով մատակարարողների կողմից ներկայացված և/կամ ստուգայցի ընթացքում բացահայտված տեղեկատվությունը:
- Սերտիֆիկացնող մարմինը հաստատում է փեթակներից 3 կմ շառավղով տարածք, որի շրջանակներում մեղուներին պետք է մատչելի լինի համապատասխան և բավարար կեր:
- Սերտիֆիկացնող մարմինը պետք է սահմանի գոտիներ, որտեղ չպետք է տեղադրվեն այն փեթակները, որոնք բավարարում են օրգանական արտադրության պահանջները՝ ելնելով արգելված նյութերով, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներով կամ շրջակա միջավայրը աղտոտող նյութերով աղտոտված լինելու հանգամանքից:

Կեր

- Արտադրական ժամանակահատվածի վերջում փեթակներում պետք է թողնվի մեղրի և ծաղկափոշու բավականաչափ առատ պաշար՝ ձմեռվա քնի ժամանակաշրջանում մեղվաընտանիքի գոյատևման համար:
- Մեղվաընտանիքի արհեստական կերակրումը կարող է նախատեսվել՝ կլիմայական կամ այլ արտակարգ հանգամանքների պատճառով առաջացած սննդի ժամանակավոր պակասը լրացնելու համար: Այսպիսի դեպքերում պետք է օգտագործվի օրգանական արտադրության մեղր կամ օրգանական շաքար: Արհեստական կերակրումը պետք է իրականացվի միայն վերջին մեղրաքամի և նեկտարի կամ մեղրացողի հաջորդ գոյացումից 15 օր առաջ ընկած ժամանակահատվածում:

Անցումային շրջան

- Մեղվապահական արտադրանքը կարող է վաճառվել որպես օրգանական, եթե առնվազն մեկ տարի կատարվել են օրգանական արտադրության պահանջները:
- Անցումային շրջանի ժամանակ մեղրամոմը պետք է փոխարինվի օրգանական արտադրության մեղրամոմով: Այն դեպքերում, երբ ամբողջ մեղրամոմը հնարավոր չէ փոխարինել մեկ տարվա ընթացքում, սերտիֆիկացնող մարմինը կարող է երկարաձգել անցումային շրջանը: Օրգանական արտադրության մեղրամոմի անհասանելիության դեպքում սերտիֆիկացնող մարմինը կարող է թույլատրել ոչ օրգանական ծագման մեղրամոմի օգտագործում, եթե վերջինս ծագում է այնպիսի փեթակներից կամ տարածքներից, որտեղ արգելված նյութեր չեն օգտագործվել, և եթե այն ստացվել է մեղրամոմի վերին շերտից:
- Եթե փեթակներում մինչ այդ չեն օգտագործվել արգելված նյութեր, մեղրամոմի փոխարինման անհրաժեշտություն չկա:

Մեղուների ծագումը

- Մեղվաընտանիքների փոփոխման դեպքում ներմուծվող մեղուները հնարավորության դեպքում պետք է լինեն օրգանական արտադրական միավորից:
- Տեսակի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնվի մեղուների՝ տեղական պայմաններին հարմարվելու ընդունակությունը, նրանց կենսունակությունը և հիվանդություններին դիմակայելու ունակությունը: Նախընտրելի է «Apis mellifera»-ի և դրանց տեղական էկոտեսակների օգտագործումը:
- Մեղվանոցների վերականգնման համար պարսամայրերի և մեղվախմբերի տարեկան 10%-ը կարող են վերափոխվել ոչ օրգանական պարսամայրերից և մեղվախմբերից օրգանական արտադրության միավորի այն դեպքում, երբ վերջիններս տեղաբաշխված են մեղրահացերով փեթակներում կամ օրգանական արտադրության միավորից եկած մեղրահացերում:

Մեղուների առողջությունը

- Մեղվաընտանիքների առողջությունը պետք է ապահովել գյուղատնտեսական պատշաճ գործունեության (GAP) միջոցով՝ շեշտը դնելով ցեղի պատշաճ ընտրության և փեթակների պատշաճ շահագործման միջոցով հիվանդությունների կանխարգելման վրա:

Սա ներառում է՝

- դիմացկուն ցեղերի օգտագործում, որոնք հեշտ են հարմարվում տեղի պայմաններին,
- անհրաժեշտության դեպքում մայր մեղուների փոփոխում,
- սարքավորումների մշտապես և կանոնավոր կերպով մաքրում և ախտահանում,
- մեղրամոմի կանոնավոր նորացում,
- փեթակներում բավարար քանակի ծաղկափոշու և մեղրի առկայություն,
- փեթակների պարբերաբար վերահսկում՝ ցանկացած խախտումներ հայտնաբերելու համար,
- փեթակներում բոռաորդերի մշտապես հսկում,
- անհրաժեշտության դեպքում վարակված փեթակների տեղափոխում մեկուսացված տարածք կամ վարակված փեթակների և նյութերի ոչնչացում:

- Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի համար, մասնավորապես «Varroa destructor» վարակի դեպքում թույլատրվում է հետևյալը՝
  - կաթնաթթու, թրթնջկաթթու, քացախաթթու,
  - մրջնաթթու,
  - ծծումբ,
  - բնական եթերային յուղեր (օրինակ՝ մենթոլ, էվկալիպտոլ, կամֆորա),
  - «Bacillus thuringiensis»,
  - գոլորշի և բոց:

- Եթե կանխարգելիչ միջոցառումները անհաջողության են մատնվում, կարող են օգտագործվել անասնաբուժական դեղամիջոցներ՝ հետևյալ պայմաններով՝
  - նախապատվությունը տրվի բուսաբուժական և հոմեոպատիկ մշակմանը,
  - օգտագործվի ալլոպաթիկ, քիմիապես սինթեզված դեղամիջոցներ, որի հետևանքով մեղվապահական արտադրանքը չի կարող վաճառվել որպես օրգանական,
  - մշակված փեթակները մեկուսացվեն և անցնեն մեկ տարվա անցումային շրջան,
  - ամբողջ մեղրամոմը փոխարինվի օրգանական արտադրության պահանջներին համապատասխանող մեղրամոմով,
  - անասնաբուժական դեղամիջոցների յուրաքանչյուր օգտագործումը հստակ արձանագրվի և փաստաթղթավորվի:

- Եթե, ի հեճուկս բոլոր կանխարգելիչ միջոցառումների, մեղվաընտանիքը հիվանդանում կամ վարակվում է, ապա անմիջապես պետք է ձեռնարկվեն մեղվաբուժական միջոցառումներ և, եթե անհրաժեշտ է, փեթակները պետք է մեկուսացվեն ընդհանուր մեղվաընտանիքից:

- Շրջանակների, մեղրահացի և փեթակների վնասատուներից, կրծողներից պաշտպանության համար պետք է օգտագործվեն թակարդներ, ինչպես նաև այնպիսի նյութեր, որոնք թույլատրվում են օրգանական արտադրության մեջ օգտագործման համար:

- Բոռաորդերի ոչնչացումը թույլատրվում է միայն «Varroa jacobsoni» վարակի զսպման համար:



Կառավարում

- Հիմքի մեղրահացը պետք է պատրաստված լինի օրգանական արտադրության մեղրամոմից:
- Մեղվապահական արտադրանք ստանալու համար մեղվահացում մեղուների ոչնչացումն արգելված է:
- Այնպիսի վնասվածքները, ինչպիսիք են մայր մեղուի թևերի կտրումը, արգելված են:
- Մեղրի արտադրության գործընթացներում քիմիապես սինթեզված ռեպելենտների օգտագործումն արգելված է:
- Ծխով մշակումը պետք է պահվի նվազագույն մակարդակում: Ծխեցման համար ընդունելի նյութերը պետք է լինեն բնական կամ պատրաստված լինեն սույն օրգանական արտադրության պահանջներին համապատասխանող նյութերից:
- Խորհուրդ է տրվում մեղրի ստացման և մեղվապահական արտադրանքի վերամշակման ժամանակ պահպանել հնարավորինս ցածր ջերմաստիճան:
- Մեղրի ստացման ժամանակ արգելվում է որդերով մեղրահացի օգտագործումը:
- Նույն տնտեսության մեջ մեղվապահը փոշոտման աշխատանքները կատարելու նպատակով կարող է վարել միաժամանակ օրգանական և ոչ օրգանական միավորներ, այն պայմանով, եթե օրգանական արտադրության բոլոր պահանջները կատարվում են՝ բացառելով մեղավընտանիքների նույն տեղում գտնվելը: Հակառակ դեպքում արտադրանքը չի կարող վաճառվել որպես «օրգանական»:
- Պետք է վարվեն սույն դրույթների պահպանումը վկայող փաստաթղթային գրանցումներ:

Փաստաթղթավորում

- Պետք է վարել մանրամասն և շարունակ թարմացվող գրանցումներ:
- Պետք է կատարվի բոլոր փեթակների տեղաբաշխվածության քարտեզագրություն:

Պահեստավորում և փոխադրում

- Արտադրանքի ամբողջականությունը պետք է պահպանվի մշակման, պահեստավորման և փոխադրման ընթացքում՝ հիմնվելով հետևյալ նախազգուշացումների վրա՝
  - Օրգանական արտադրանքը պետք է միշտ պաշտպանվի ոչ օրգանական արտադրանքի հետ միախառնվելուց:
  - Օրգանական արտադրանքը պետք է միշտ պաշտպանվի օրգանական գյուղատնտեսությունում և վերամշակման ժամանակ արգելված նյութերի հետ շփումից:
- Օրգանական արտադրանքի պահեստավորման տարածքները և փոխադրման կոնտեյներները պետք է մաքրվեն՝ օգտագործելով օրգանական արտադրությունում թույլատրված մեթոդներ և նյութեր:
- Պահեստային տարածքներում և փոխադրման կոնտեյներներում, որոնք նախատեսված չեն միայն օրգանական արտադրանքի համար, օգտագործելուց առաջ պետք է ձեռնարկվեն միջոցառումներ, որպեսզի կանխվի ցանկացած անցանկալի նյութերով աղտոտումը:
- Պահեստավորման համար տարածքը պետք է այնպես կազմակերպված լինի, որ երաշխավորի խմբաքանակների նույնականացումը, և կանխարգելվի միախառնվելու կամ օրգանական կանոններին չհամապատասխանող նյութերով և/կամ արտադրանքով աղտոտվելու ցանկացած հնարավորություն:
- Օրգանական մթերքները պետք է միանշանակ և պարզ նույնականացվեն ողջ ժամանակաընթացքում: Անասնաբուժական ալլոպաթիկ արտադրանքի և հակաբիոտիկների պահումը տնտեսություններում թույլատրելի է, եթե դրանք նշանակվել են անասնաբույժի կողմից օրգանական արտադրության ընթացակարգերի շրջանակներում նկարագրված բուժումների համար, այն պայմանով, որ դրանք պահվեն հսկվող տարածքում, և կատարվեն համապատասխան գրանցումներն ու փաստաթղթավորումը:
- Այն դեպքերում, երբ մատակարարողը առնչվում է և՛ օրգանական, և՛ ոչ օրգանական արտադրանքի հետ, և երբ դրանք պահեստավորվում են այնպիսի պահեստներում, որտեղ նաև այլ գյուղատնտեսական արտադրանք և սննդամթերք է պահեստավորված, ապա՝
  - օրգանական արտադրանքը պետք է պահպանվի մնացած գյուղատնտեսական արտադրանքից և/կամ սննդամթերքից զատ.
  - պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք կերաշխավորեն խմբաքանակի նույնականացումը, ինչպես նաև կկանխեն ոչ օրգանական արտադրանքի հետ միախառնումը կամ դրանով փոխարինումը:
  - օրգանական արտադրանքի պահեստավորումից առաջ պետք է իրականացվեն համապատասխան մաքրման միջոցառումներ, որոնց արդյունավետությունը ստուգածշտված է.
- Վերոնշյալ գործողությունները պետք է գրանցվեն և փաստաթղթավորվեն:

Մեղվապահության համար հատուկ հսկողական միջոցառումներ

- Անասնաբուժական դեղամիջոցների օգտագործման դեպքում դրա տեսակը, ախտորոշման մանրամասները, պոզոլոգիան, կիրառման մեթոդը, բուժման տևողությունը և համակարգից հանման/մեկուսացման իրավական տևողությունը պետք է արձանագրվի և տեղեկացվի սերտիֆիկացնող մարմնին:
- Մեղվապահական միավորի տեղադրման տարածքը պետք է գրանցվի փեթակների նույնականացման հետ մեկտեղ: Սերտիֆիկացնող մարմինը պետք է տեղեկացվի դրա փոխադրման մասին առնվազն 48 ժամ առաջ:
- Սերեկի հեռացումը և մեղրի էքստրաքցիան՝ ներառյալ ամսաթիվը և քանակները, պետք է արձանագրվեն:
- Մեղվաընտանիքները պետք է նույնականացվեն փեթակներով:
- Մատակարարողը սերտիֆիկացնող մարմնին ստուգայցի ժամանակ պետք է տրամադրի արտադրական միավորի ազատ մուտքի իրավունք, ինչպես նաև գրավոր հաշվառումների և համապատասխան ուղեկցող փաստաթղթերի մատչելիություն:
- Մատակարարողը պետք է սերտիֆիկացնող մարմնին տրամադրի ստուգայցի նպատակների համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվություն:

«Green Caucasus» ապրանքային նշանով սերտիֆիկացման համակարգի նկարագրությունը

«Էկոգլոբ» ՍՊԸ՝ մասնավոր ընկերություն՝գրանցված Հայաստանի Հանրապետությունում:
«Կավկասսերտ» ՍՊԸ՝ մասնավոր ընկերություն՝գրանցված Վրաստանի Հանրապետությունում:
«Էկոգլոբը» և «Կովկասսերտը» անկախ մասնավոր ընկերություններ են, որոնք համատեղ մշակել են օրգանական գյուղատնտեսության վարման ու օրգանական սննդամթերքի արտադրության սերտիֆիկացման և որակի միասնական համակարգեր, ինչպես նաև «Օրգանական ձևով արտադրված մթերքի արտադրության, վերամշակման, մակնշման և մարքեթինգի ստանդարտ»:
Երկու ընկերություններն էլ գրանցել են «Green Caucasus» ապրանքային նշանը և այն օգտագործում են սերտիֆիկացման միասնական համակարգի, որակի և ստանդարտի իդենտիֆիկացման համար:
«Green Caucasus» օրգանական ձևով արտադրված մթերքի արտադրության, վերամշակման, մակնշման և մարքեթինգի ստանդարտը համարժեք է «Regulation (EC) No 834/2007, 889/2008, 1235/2008», Շվեյցարիայի օրգանական օրենսդրությանը, «Codex Alimentarius», IFOAM, իսկ օրգանական սերտիֆիկացումը համապատասխանում է միջազգային ստանդարտների պահանջներին, ինչը թույլ է տալիս երկու ընկերությունների հաճախորդներին/մատակարարողներին իրացնել իրենց արտադրանքը տարբեր շուկաներում՝ ներառյալ Եվրոպական Միության շուկան, որպես օրգանական:
Սերտիֆիկատները, որոնք տրվում են ընկերությունների կողմից «Green Caucasus» ապրանքային նշանով, ունեն ինքնուրույն իրավաբանական ուժ: «Էկոգլոբի» և «Կավկասսերտի» կողմից տրված սերտիֆիկատները ճանաչված են օրգանական արտադրանքի՝ եվրոպական շուկայում իրավասու մարմինների կողմից («DAKKs» հավատարմագրող մարմին): Սերտիֆիկացվող մթերքները շուկայում վաճառվում են «օրգանական», «կենսաբանական», «էկոլոգիական» նշումներով:
«Էկոգլոբը» և «Կավկասսերտը» ընդգրված են ԵՄ համարժեք սերտիֆիկացնող մարմինների պաշտոնական ցուցակում: Դա նշանակում է, որ իրենց կողմից սերտիֆիկացված մթերքներն ունեն ազատ մուտք դեպի ԵՄ շուկա՝ առանց ներկրման թույլտվության ընթացակարգի:
Ցուցակը հրապարակված է «EC 1267/2011» կանոնակարգում: «Էկոգլոբ» ՍՊԸ իրավասու է սերտիֆիկացնել ՀՀ և ՀՀ տարածքից դուրս:
Բացի այդ, «Էկոգլոբ» ՍՊԸ ակրեդիտացված է «USDA NOP»-ի կողմից ԱՄՆ օրգանական շուկայի համար և հանդիսանում է «USDA NOP»-ի սերտիֆիկացնող ներկայացուցիչ: Սա թույլ է տալիս «Էկոգլոբի» կողմից սերտիֆիկացված արտադրանքն արտահանել ԱՄՆ և Կանադայի շուկաներ:
«Էկոգլոբը» ճանաչվել է և Շվեյցարիայի կողմից ընդգրկվել է համարժեք սերտիֆիկացնող մարմինների ցուցակում:

GREEN CAUCASUS

Տեղեկատվություն գյուղատնտեսական արտադրանքի սերտիֆիկացման ծառայությունների մասին

Կազմակերպության անվանումը՝ «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Մ. Հերացի 18, բն.3
Աշխատանքային հասցե ՀՀ, ք. Երևան, 0033, Ա. Խաչատրյան 1, բն.66
Հեռախոս՝ + (374 10) 22 12 95
Ֆաքս՝ + (374 10) 22 12 95
Էլեկտրոնային հասցե՝ nd@ecoglobe.am, nuneemil@yahoo.com, armenianorganic@yahoo.com, ep@ecoglobe.am
Գլխավոր տնօրեն՝ Նունե Դարբինյան

- Ստորև առաջարկվող տեղեկատվությունը նպատակ ունի ներկայացնել սերտիֆիկացման իրականացման ընթացքը, մասնավորապես՝ արտադրության գործընթացի հանդեպ հոկողության/գնահատման և սերտիֆիկացման ընթացակարգերը:

- Ստուգայցի խնդիրն է՝ կատարել կառավարման և արտադրության ընթացքի պարբերական, անկախ և անաչառ գնահատում՝ նպատակ ունենալով որոշել համապատասխանությունը ստանդարտին: Ստուգայցերի ժամանակ գնահատվում է օրգանական արտադրության ամբողջ գործընթացը:

- Ստուգայցերը ներառում են հետևյալ պարտադիր և մատակարարողի արտադրական գործունեությունից առաջացած անհրաժեշտ ստուգայցները՝
  - Առաջին գնահատում. կատարվում է սերտիֆիկացման հայտը ներկայացնելուց հետո՝ նախքան հաճախորդի հետ պայմանագիր ստորագրելը: Առաջին գնահատման ընթացքում գնահատվում է հայտատուի ստանդարտին, օրգանական տնտեսության կառավարման ծրագրին համապատասխանությունը:
  - Անցումային փուլի ստուգայցեր. օրգանական գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող մատակարարողների համար ստանդարտով նախատեսված է անցումային շրջան տարբեր տևողությամբ՝ կախված գործունեության տեսակից: Ստուգման դրական արդյունքի դեպքում տրվում է դեպի օրգանական արտադրության անցումային շրջանի սերտիֆիկատ: Առաջին անցումային շրջանի սերտիֆիկատը տրվում է ոչ շուտ քան 12 ամիս անց այն պահից, երբ մատակարարողը հայտարարել է ստանդարտի պահանջների պահպանման մասին: Անցումային փուլը մեղվապահության դեպքում 12 ամիս է:
  - Անցումային շրջանի սկիզբը, որպես կանոն, համարվում է առաջին ստուգայցի օրը: Այն դեպքում, երբ առաջին ստուգայցի օրը հարմար չէ որևէ պատճառով, ներառյալ՝ կլիմայական, եղանակային, սեզոնային և այլն, մատակարարողի օրգանական գործունեության գնահատումը համաձայնեցվում է մատակարարողի հետ: Անցումային շրջանի սկիզբ կարող է համարվել նաև համաձայնագրի կամ հայտի ստորագրման օրը:
  - Տարեկան ստուգայցերը կատարվում են յուրաքանչյուր տարի: Ստանդարտի համաձայն՝ առաջին օրգանական սերտիֆիկատը մեղվապահության համար տրվում է Ստանդարտի պահանջների կատարումից 12 ամիս հետո:
  - Ընթացիկ և չհայտարարված/ոչ պլանային ստուգայցերը կատարվում են հայտնաբերված անհամապատասխանությունների և ուղղիչ գործողությունների արդյունքում: Հիմնական և ընթացիկ ստուգայցերի պայմանները նախատեսվում են մատակարարողի և սերտիֆիկացման մարմնի միջև կնքված պայմանագրում:

- Օրգանական արտադրության նկարագրությունը հանդիսանում է օրգանական սերտիֆիկացման հիմնական պահանջը: Առաջին ստուգայցի կատարման համար անհրաժեշտ է ներկայացնել սերտիֆիկացվող արտադրական միավորի մանրակրկիտ նկարագրությունը, արտադրության մանրանասն սխեման կամ քարտեզը:

- Փաստաթղթերի և հայտի դրական գնահատումից հետո կնքվում է պայմանագիր մատակարարողի և սերտիֆիկացնող մարմնի միջև և նշանակվում առաջին ստուգայցի ժամկետը:

Առաջին ստուգայց

- Որպես կանոն, առաջին ստուգայցը նշանակվում է փաստաթղթերի և հայտի փաթեթի ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում:
- Առաջին ստուգայցի ժամանակ գնահատվում է արտադրության նկարագրությունը («Organic Management Plan») և Ստանդարտին համապատասխանությունը:
- Կատարվում է արտադրության բոլոր հատվածների պահպանման, փոխադրման, օրգանական արտադրության կանոնների վերաբերյալ աշխատակազմի գիտելիքների, արտադրության հետագծելիությունը ապահովող գրանցման ու հաշվառման փաստաթղթերի համակարգի գնահատում:

Հետագա տարեկան ստուգայցեր

- Սերտիֆիկացման համակարգի բոլոր փոփոխությունները պետք է ներկայացվեն սերտիֆիկացնող մարմնին նախօրոք, սակայն ոչ ուշ քան մինչև ընթացիկ տարվա մարտի 15-ը:
- Օրգանական արտադրությունը պետք է գնահատվի առնվազն տարին մեկ անգամ՝ ստանդարտին համապատասխանության շարունակական անընդհատությունը որոշելու նպատակով:
- Եթե տեղի է ունենում փոփոխություն օրգանական արտադրական միավորում, անհրաժեշտ է ներկայացնել օրգանական կառավարման պլանի նորացված ձևը՝ հերթական տարեկան ստուգայցին նախապատրաստվելու համար:
- Ի լրումն տարեկան պլանային ստուգայցերի՝ լրացուցիչ կարող են կատարվել ոչ պլանային ստուգայցեր՝ առանց նախազգուշացման:
- Տեսուչը, որպես կատարած ստուգայցի և ստուգայցի արդյունքների հետ մատակարարողի համաձայնության վկայություն, տեղում թողնում է ստուգայցի ավարտական հարցազրույցի ձևը («Exit Interview»), ստորագրված տեսուչի և մատակարարողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից:

Մատակարարողի պարտականությունները

- Մատակարարողը պատասխանատու է հետևյալի համար՝
  - Ստանդարտի բոլոր կանոններին և պահանջներին համապատասխանություն:
  - Սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչների ազատ մուտքի ապահովում օբյեկտներում և արտադրամասերում:
  - Սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչների համար բոլոր փաստաթղթերի (նեռարյալ՝ ֆինանսական) մատչելիություն, որոնք ուղղակի և անուղղակի կապված են մատակարարողի օրգանական տնտեսության հետ:
  - Սերտիֆիկացնող մարմնին ծանուցում օրգանական տնտեսության համակարգում բոլոր փոփոխությունների մասին կամ ցանկացած այլ բնագավառում, որը կարող է ազդել սերտիֆիկացման համակարգի վրա, ներառյալ՝ օրգանական տնտեսության կառավարման, սեփականության, արտադրանքի տեսակի փոփոխությունները և այլն:
  - Ստանդարտի խախտման դեպքում անհապաղ արտադրանքի օրգանական կարգավիճակի հետ կապված բոլոր նշանների, ապրանքանիշերի, սերտիֆիկատների կիրառման դադարեցում և վերացում:
  - Սերտիֆիկացնող մարմնին ապահովում ցանկացած տեղեկատվությամբ, որը կապված է սերտիֆիկացման համակարգի և հսկման հետ, ինչպես նաև կարող է ունենալ էական ազդեցություն մատակարարողի և սերտիֆիկացնող մարմնի միջև կնքված պայմանագրի վրա:

Հետագծելիություն՝ փաստաթղթավորում և հաշվառում

Հետագծելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է կատարել փաստաթղթավորում և պահպանել անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝

- Վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի միջոցների, ծագման, տեսակի, օգտագործման ձևի վերաբերյալ տվյալները:
- Սերտիֆիկացված օրգանական ապրանքների վաճառման տեղի, առաքման ամսաթվերի, ծավալի վերաբերյալ տվյալներ՝ներառյալ գնորդի կամ միջնորդի անվանումը:
- Մեղվաընտանիքների գրանցամատյանը/ռեգիստրը, որտեղ նշված են տեսակը, ծագումը, ներմուծման ամսաթիվը, օրգանական կարգավիճակը, անցումային շրջանը, եթե այդպիսին առկա է, անհատական համարանիշը, տվյալներ նախկինում ստացած անասնաբուժական միջամտության մասին:
- Բոլոր անասնաբուժական նյութերը, ներառյալ՝
  - գնման ամսաթիվը,
  - անվանումը և դեղամիջոցի ակտիվ բաղադրիչը և գնված քանակը,
  - արտադրանքի մատակարարողը,
  - այն ստացած փեթակների համարները,
  - ախտորոշումը,
  - չափաբաժինը,
  - բուժման սկզբի և ավարտի ամսաթվերը և կիրառման մեթոդը,
  - դեղանյութի օգտագործման ընդհանուր քանակը,
  - պիտակի վրա նշված կամ պաշտոնապես սահմանված պիտանիության ժամկետը,
  - միջոցների կիրառման համար պատասխանատու անձի անունը:
- Ֆինանսական գրանցումները պետք է ցույց տան օրգանական արտադրության վաճառքից ստացված եկամուտը և բոլոր գնումների հաշիվ-ապրանքագրերը, որոնք պետք է համապատասխանեն ամբողջական վաճառքներին:
- Արտադրանքի կամ արտադրական համակարգի վերաբերյալ հաճախորդներից կամ հանրությունից ստացված բողոքների գրանցամատյան:
- Բոլոր գրանցումները պետք է լինեն լիարժեք, որպեսզի հնարավոր լինի հիմնավորել ստանդարտի պահանջներին համապատասխանությունը, և պետք է դրանք պահվեն առնվազն 5 տարի: Պահպանված գրանցամատյանների համակարգի կարճ նկարագրությունը անհրաժեշտ է (օրինակ՝ թղթապանակների տեղը, թարմացման հաճախականությունը):

Ստուգման հետաձգում կամ չկայացում

Ստուգման ժամանակացույցը որոշվում և համաձայնեցվում է մատակարարողի և սերտիֆիկացնող մարմնի միջև: Այն դեպքում, եթե մատակարարողը հայցում է չկայացնել, հետաձգել կամ փոփոխություն կատարել այցելությունների ժամանակացույցում, ապա նա պարտավոր է իր հիմնավորումը ներկայացել ոչ ուշ քան հայցվող ժամկետից 30 օր առաջ: Հակառակ դեպքում սերտիֆիկացնող մարմինը իրավունք է վերապահում մատակարարողից գանձել մեկ տեսչական այցին հավասար վճարում՝ ադմինիստրատիվ ծախսերը կատարելու համար:

Ստուգայցերի վաղաժամկետ դադարեցում

Եթե ընթացիկ ստուգայցը վաղաժամկետ ավարտվում է մատակարարողի պահանջով, ապա դրա համար մատակարարողի կողմից վճարվում է ստուգայցի լրիվ գինը:

Սերտիֆիկացում, գործածում, երկարեցում, դադարեցում և չեղյալ համարում.

- Ստուգայցերի դրական արդյունքների հիման վրա ընդունվում է մատակարարողին օրգանական սերտիֆիկատի շնորհման որոշում այն արտադրանքի համար, որն ընդգրկված է սերտիֆիկացման հայտում, պայմանագրում և օրգանական արտադրության կառավարման պլանում:
- Սերտիֆիկատը թարմացվում է ամեն տարի կամ կարող է երկարեցվել յուրաքանչյուր տարվա դրական ստուգայցերի հիման վրա:
- Ստանդարտին անհամապատասխանության կամ խախտման հայտնաբերման դեպքում սերտիֆիկացնող մարմինը որոշում է կայացնում մատակարարողի սերտիֆիկատի դադարեցման կամ չեղյալ համարելու մասին:
- Ծառայությունների գնացուցակը և սակագները տրամադրվում են սերտիֆիկացնող մարմնի կողմից և կարող են վերանայվել կազմակերպության ներքին ստուգումների արդյունքում և ընդհանուր տնտեսական պայմաններից ելնելով:
- Սակագների մասին տեղեկատվությունը բաց է և հրապարակվող բոլոր հետաքրքրվողների համար: Այն պարտադիր տրամադրվում է բոլոր հայտատուներին և մատակարարողներին:
- Ստուգայցի արդյունքները շարադրվում են հաշվետվության տեսքով: Հաշվետվության պատճենը սերտիֆիկացնող մարմնի կողմից ներկայացվում է մատակարարողին/հաճախորդին:
- Հաշվետվության հիման վրա սերտիֆիկացման համար իրավասու անձնակազմը ընդունում է սերտիֆիկացման մասին որոշում: Արտադրանքին տրվում է օրգանական սերտիֆիկատ, որը հաստատում է, որ մթերքը արտադրվել է օրգանական գյուղատնտեսության արտադրությունում:
- Օրգանական սերտիֆիկատում նշվում են արտադրության ծավալները, սերտիֆիկացվող արտադրանքի տեսակը: Սերտիֆիկատը ուժի մեջ է 1 տարի:
- Սերտիֆիկատը հրատարակվում է 2 բնագիր օրինակներով, որոնցից մեկը պահվում է սերտիֆիկացնող մարմնի մոտ, մյուսը տրվում է մատակարարողին:
- Գնահատման բացասական արդյունքի դեպքում սերտիֆիկատը կարող է ժամանակավոր դադարեցվել կամ չեղյալ հայտարարվել:
- Սերտիֆիկացնող մարմինը կիրառում է պատժամիջոցների / սանկցիաների համակարգ մատակարարողի հանդեպ՝ կախված ստանդարտի պահանջների և/կամ մատակարարողի և սերտիֆիկացնող մարմնի միջև կնքված պայմանագրի պահանջներից:

Մակնշում, ապրանքային նշան

- Սերտիֆիկացնող մարմինը հսկում է ապրանքային նշանների, նիշերի, օրգանական սերտիֆիկացման մասին հղումների և օրգանական մակնշման օգտագործումը:
- Ստանդարտի՝ 12 ամիս հաջողությամբ պահպանման և սերտիֆիկատի առկայության դեպքում հնարավոր է նշել, որ արտադրանքը արտադրված է «Տնտեսության՝ դեպի օրգանական անցման փուլում» (անցումային շրջանի սերտիֆիկատ) և սերտիֆիկացնող մարմնի անվանումը:
- Օրգանական սերտիֆիկատի առկայության դեպքում մատակարարողը ստանում է իրավունք օգտագործել սերտիֆիկացնող մարմնի անվանումը, «Green Caucasus» ապրանքային նշանը և նշել, որ արտադրանքն արտադրված է օրգանական արտադրության միավորում, ինչպես նաև մակնշման բառեր՝ «օրգանական», «էկոլոգիական», «կենսաբանական»:
- Սերտիֆիկացնող մարմինը հսկում է օրգանական արտադրության վրա հղումների, ապրանքային նշանների և սերտիֆիկացնող մարմնի անվանման, համապատասխան պիտակների վրա, գովազդներում, տպագիր հրատարակումներում սերտիֆիկացման ոլորտին և սերտիֆիկացվող արտադրանքին վերաբերող նշումների օգտագործումը:
- Նախքան պիտակների տպագրումը մատակարարողը պետք է գրավոր համաձայնեցնի դրա բովանդակությունը սերտիֆիկացնող մարմնի հետ:
- ԵՄ օրգանական նշանը (կանաչ տերև) նույնպես կարող է օգտագործվել «էկոգլոբ» ՍՊԸ կողմից սերտիֆիկացված արտադրանքի վրա՝ հաշվի առնելով «EC Regulations 834/2007 և 889/2008» պահանջները: Այդ մասին մանրամասները կտրամադրվեն «էկոգլոբ» ՍՊԸ կողմից:



ecoglobe

Էկոգլոբ ՍՊԸ

Հասցե. ՀՀ, ք. Երևան, 0033,
Ա. Խաչատրյան 1, բն.66
Հեռախոս. + (374 10) 22 12 95
Ֆաքս. + (374 10) 22 12 95
Էլ. փոստ nd@ecoglobe.am,
ep@ecoglobe.am,

ՀՀ ԳՆ ՍԱՊԾ

Հասցե. ՀՀ, ք. Երևան, 0051,
Կոմիտաս 49/2
Հեռախոս. + (374 10) 20 60 40
Ֆաքս. + (374 10) 20 45 90
Էլ. փոստ ssfs@ssfs.am,
ssfs@snund.am,